**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**
**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-2567/26
*10 հուլիս2026թ.*

**«ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ**

**ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.07.2026թ.

Հարգելի պարոն Ա.Սիմոնյան և Հ.Միքայելյան

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի և կոնսորցիումով հանդես եկած «ՍԱՔՇԻՆ» ՍՊԸ, «ԱՇՈՏ և ՀԱՅԿ» ՍՊԸ միջև 29/06/2026թ. կնքվել է «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/7» ծածկագրով պայմանագիր 68196000/վաթսունութ միլիոն մեկ հարյուր իննիսունվեց հազար/ դրամի չափով:

Պայմանագիրը կնքելուց հետո պարզվեց, որ կոնսորցիումով հանդես եկած «ՍԱՔՇԻՆ» ՍՊԸ-ի, «ԱՇՈՏ և ՀԱՅԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը ներկայացված է սխալ, հրավերի պահանջներին անհամապատասխան, որը հիմք է հանդիսացել պայմանագիրը միակողմանի լուծման համար:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 33-րդ կետի 8-րդ ենթակետով և պայմանագրի 8.3 կետով պատվիրատու հանդիսացող Ալավերդու համայնքապետարանը «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/7» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծում է:

8) այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է.

Միաժամանակ հայտնում ենք, որ «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/7» ծածկագրով պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված ՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հայտնում ենք, որ «Կապալառուի» նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին » ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1- ին մասի 6-ի/ա ենթակետը .խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում/մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում/ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունը /ներկայացվել է անհամապատասխան փաստաթուղթ/, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Հայտնում ենք նաև, որ Պատվիրատուի՝ Ալավերդու համայնքապետարան, պատճառաբանված որոշմամբ Ձեր կազմակերպությունն ընդգրկվելու է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և պայմանագրի ու որակավորման ապահովման երաշխիքները ներկայացվելու են համապատասխան առևտրային բանկ՝ գանձումներ կատարելու համար: Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Պատվիրատուի 900265121104 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին

պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին: Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Պատվիրատուի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

*Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Քառյան*